

Էսթեր ԽԵՄՉՅԱՆ

ԱՆԵԾՔ-ՄՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ ԵՎ ՕՐՀՆԱՆՔ- ԲԱՐԵՄԱԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԿԱՐՍԻ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ

Կարսի տարածաշրջանի ժողովրդական բանահյուսության մեջ զգալի տեղ են գրավում հրաշապատում, իրապատում և կենդանական հեքիաթները, որոնք ներկայացնում են հայկական հեքիաթային ժառանգությանը բնորոշ սյուժեների ու մոտիվների տեղական տարբերակները՝ ինքնատիպ հյութեղ ոճով և ասացողական ավանդությամբ: Այդ հեքիաթները, պատմվելով տարածաշրջանում կենցաղավարող բարբառներով, ենթաբարբառներով ու խոսվածքներով, ներառել են Կարսի բառագանձի ու արտահայտամիջոցների լավագույն ու առանձնահատուկ նմուշները՝ իրենց դիպուկությամբ ու բազմիմաստությամբ:

Անդրադառնալով Կարսի ազգաբնակչության հեքիաթներին՝ պետք է նկատել, որ բնօրրանի կորուստը, տարագրությունը, նոր տեղավայրին ինտեգրվելու խնդիրները, կենցաղավարման միջավայրի բացակայությունը, անբարենպաստ կենսապայմանները (գիտատեխնիկական առաջընթաց, ժամանակակից նոր արժեքների ներհուք գյուղական կենցաղ, երիտասարդ ունկնդիրների ընկալումների ու հայացքների բևեռացում) հող են նախապատրաստել ավանդական, պատմականորեն ձևավորված արժեքների խաթարման համար: XX դարի կեսերի կարսեցի բանասացն արդեն կորցրել էր կարսյան հեքիաթների ոչ միայն սյուժեները, այլև բարբառային և բառապաշարային տարրերի զգալի մասը, հետևաբար XX դարի 60-70-ական թվականներին գրառված հեքիաթները զգալիորեն հեռացել էին իրենց նախատիպերից: Աստիճանաբար ավանդական հեքիաթը, ենթարկվելով ժամանակի թելադրանքին, երբեմն վերածվել է սխեմատիկ պատումի: Հեքիաթապատման առաջին խոչընդոտը վերապատմող բանասացի հիշել-չհիշելու ծանրագույն խնդիրն էր՝ պայմանավորված երկարամյա ընդմիջումից հետո մանկության ու երիտասարդության տարիներին լսածը վերարտադրելու բարդությամբ: Երբեմն բանասացը, առաջնորդվելով լսարանի պահանջներով, աշխատում էր ավելի պարզեցնել և հեշտացնել պատումը, որի հետևանքով երկարաշունչ սյուժեի կրկնվող հատվածները բաց էին թողնվում, կամ էլ համառոտ տարբերակով էին ներկայացվում: Մովորաբար կրկնվող հատվածներից առաջ կիրառվում էր կայուն բանաձև, որը մատնացույց էր անում պատումի կրկնությունը. «Տըդեն ինչ օր տեսել, լըսել է, կը սկըսէ նաղըլ էնելը վաճառականից, էն քոռ մարդուց, Շամիրից, ինչըխ օր ձեզի նաղըլ էրեցի»:¹

¹ Կարս. հայոց բանահյուսական մշակույթը, Կազմողներ՝ Ս. Հարությունյան, Է. Խեմչյան, Ս. Խեմչյան, Ա. Պողոսյան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Եր., 2013 (հետայսու՝ Կարս), «Չըքավոր պատվի տրդեն», № 38(38), էջ 248:

Պետք է նկատել, որ մյուս տարածաշրջանների հեքիաթների հետ համեմատած՝ Կարսի հեքիաթներում զգալի քանակ են կազմում երկարաշունչ և միա-հյուսված պոեմներով տարբերակները:²

Ինչպես ասվեց, իրենց կառուցվածքով Կարսի հեքիաթները համահունչ են և նմանվում են մյուս տարածաշրջանների հեքիաթներին: Հեքիաթում պոեմների, մոտիվների, հերոսների գործառնությունների հերթագայությունը խարսխված է ժանրին բնորոշ ավանդական կայուն բանաձևերի վրա, որոնք, ստորաբաժանվելով սկզբվածքային, միջնամասային և եզրափակիչ տեսակների, առանց փոփոխության կարող են կիրառվել ցանկացած հեքիաթում:

Ավանդական բանաձևերը լեզվադարձվածային կայուն կադապրներ են, որոնք կիրառվում են համաշխարհային հեքիաթասացության մեջ: Կարսի հեքիաթներում դրանք տեղական երանգավորում են ստացել և ներկայացնում են տարածաշրջանի լեզվամտածողության, հոգեկերտվածքի, կենցաղի, հավատալիքների, սովորությունների խտացված ամբողջությունը: Կարսի հեքիաթներում պահպանված են հայ ժողովրդական հեքիաթների ավանդական տիպերը, կառուցվածքն ու հեքիաթապատման ասացողական ավանդույթները: Հեքիաթի բանավոր փոխանցման ընթացքում բանասացը ստացել է ավանդական պոեմներով, մոտիվներով, կայուն բանաձևերով ու որոշակի կառուցվածքով ստեղծագործություն, որը հնարավորության սահմաններում պահպանել է համալրել է սեփական բառապաշարի լեզվական միավորներով, որոնք, իր կարծիքով, տվյալ պարագայում տեղին են և ավելի են ընդգծում ու բացահայտում պատումի դրվագների կարևորությունը:

Հեքիաթային կայուն բանաձևերին զուգահեռ՝ կարսեցի բանասացները իրենց պատումների մեջ ներմուծել են ասույթաբանական ժանրեր (առած-ասացվածք, երդում, սպառնալիք, անեծք, օրհնանք-բարեմաղթություն, դարձված և այլն), որոնց օգնությամբ ավելի են ընդգծել հեքիաթապատումի գործողությունների և հերոսների դերը, առաջ են բերել դրական և բացասական ցանկություններ և ուղղորդել դրանք:

Բանագիտության մեջ ասույթաբանական ժանրերի ձևավորման նախակիզը կապվում է «կոլեկտիվ հուզականության» և «խմբակային սուբյեկտիվիզմի» արտահայտության հետ, որոնց հետևանքով ի հայտ են եկել բազբաբնույթ բովանդակությամբ կարճառոտ բանաձևումներ:³ Ասույթաբանական կամ բանաձևային

² Հեքիաթային ժառանգության մեջ առանձնանում է «Շահենշահ և Սալվի» հեքիաթը, որի մեջ ներառված է հերոսների մի քանի սերունդ: Ինչպես հավաստել է բանասաց-բանահավաք Եղիշե Խաչատրյանը, այս հեքիաթը բաղկացած է եղել յոթ մասից, սակայն նա այն մոռացել է և հիշողությամբ վերականգնել հետևյալ հերոսների (Արմավիրի Արզուման թագավոր, Խոսրով, Շիրին շահ, Շահեն շահ) մասին պատումները: Հերոսների ժառանգաբար հերթագայությունը և գործողությունների ընդգրկման տարածաշրջանային արեալը (Արարատյան դաշտ, Արմավիր, Մասիս) հուշում են, որ որպես հեքիաթ ներկայացված այս ստեղծագործությունն անցյալում պատմված տեղական վիպասքի մի մասն է (Կարս, «Շահենշահ և Սալվի», № 31(31), էջ 193):

³ Мелетинский Е. Возникновение и ранние формы словесного искусства, ИВЛ - История всемирной литературы, том I, Изд-во "Наука", Москва, 1983, с. 25.

Ժանրերը վիպական բանահյուսության մյուս ժանրերից տարբերվում են իրենց սեղմ ծավալով և ասելիքի համապարփակությամբ: Դարավոր փորձով հաստատագրված՝ պարզ ու հակիրճ իմաստությունների խորքում պահպանված են մեծագույն ճշմարտություններ և իրողություններ, որոնք իրենց ժանրային բազմաբնույթ դրսևորումներով (անեծք-սպառնալիք, օրհնանք-բարեմաղթություն, առած-ասացվածք, դարձված և այլն) հարստացնում են մարդու առօրյա խոսքը՝ մեծ կշիռ հաղորդելով դրան և այն դարձնելով ավելի դիպուկ ու արտահայտիչ: Վերոհիշյալ առանձնահատկություններով պայմանավորված՝ ասույթաբանական ժանրերը գործողության մեջ են դրվում պահի ու անհրաժեշտության թելադրանքով՝ ընդգծելով արտահայտված մտքի համաժամանակյա կարևորությունը, դրական ու բացասական զգացումների խտացված պոթոկումը, սեփական ճշմարտությունը դարավոր կենսափորձով ու իմաստությամբ հասու դարձնելն ու արժևորելը: Որպես հավատալիքների, սովորույթների, չգրված օրենքների, հասարակական, պատմական, կենցաղային տարբեր երևույթների խտացումներ՝ ասույթաբանական ժանրերն ամենօրյա կիրառությունից զատ մեծ նշանակություն ու դեր են ունեցել բանասացների կողմից պատմողական ժանրերի երկացանկերի ոճավորման, պատկերավորման և բարբառային բառազանձի հարստացման մեջ: Դրանք ծառայել են ոչ միայն որպես գեղարվեստական արտահայտչամիջոցներ, այլև պատումն ավելի հասկանալի ու թափանցիկ տեղ հասցնելու, լսարանի ուշադրությունը կենտրոնացնելու ու գրավելու անխափան, բազում սերունդների ասացողական փորձով հաստատված միջոց: Կարսեցի բանասացներն իրենց պատումներում կիրառել են լեզվական այն միավորները, որոնք կենցաղավարել և ամենօրյա գործածություն են ունեցել ընտանիքներում, հասարակական հավաքույթներում, աշխատանքային փոխհարաբերություններում, զգացմունքների դրսևորման ոլորտում, դրական և բացասական ցանկությունների արտահայտման անհրաժեշտության պահանջի դեպքում և այլն:

Ելնելով հեքիաթապատումի ընթացքից՝ կարսեցի բանասացը դիմել է Կարսի ասույթաբանական բանահյուսության հարուստ զինանոցին և, ըստ անհրաժեշտության ու պահանջի, դրանցով հարստացրել ավանդական կայուն բանաձևերի շարքը: Դրանք հատկապես կիրառվել են հեքիաթի միջնամասում և լրացրել ու ավելի արտահայտիչ են դարձրել միջնամասային բանաձևերը: Սակայն պետք է նկատել, որ սկսվածքային և եզրափակիչ բանաձևերը նույնպես կարիք են ունեցել լրացուցիչ մեկնաբանման: Ըստ գործառույթի՝ սկսվածքային բանաձևերն անմիջապես ունկնդրին տեղափոխում են հեքիաթային ժամանակի ու տարածության մեջ և ներկայացնում ապագա գործողությունների նախապայմաններն ու դրդապատճառները: Այս պարագայում հաճախ կարևոր դեր է խաղում անեծք-բանաձևը, որի հմայական գործողության հետևանքով առաջացած իրավիճակը հերոսին մղում է գործողությունների, որոնց միջոցով պետք է վերացվի անեծքի բացասական ազդեցությունը և լուծվի հեքիաթի գլխավոր խնդիրը: Ըստ այդմ Կարսի հեքիաթներում անեծքների կիրառման երկու տիպ է հանդիպում. 1) Անեծք պատճառահետևանքային շղթայով, որն ընթացքի մեջ է դրվում հեքիաթի սկզբնա-

մասում, երբեմն նաև միջնամասում: Անեծքի սույն տեսակը տրվում է որևէ մեկի (պառավ, դերվիշ) կողմից, ում վնաս է հասցվել կամ ում իրավունքները ոտնահարվել են: Անեծքին հետևում է բնական կարգի խաթարումը, ապա այն վերացնելուն կամ վերականգնելուն միտված գործողությունները: 2) Անեծք, որը կիրառվում է հեքիաթի միջնամասում, կապ չունի հեքիաթի բուն խնդրի հետ, այլ ուղղված է կոնկրետ ինչ-որ մեկին՝ որպես տվյալ պահի և գործող անձի անհատական հատկանիշների ու կարողությունների բացասական որակում, օրինակ. «—Հողը՝ գլխիս, էղել էս տասնհինգ-տասնվեց տարեկան աղջիկ, հեչ մե բանմ էնել չիտես»:⁴

Ըստ ժողովրդական պատկերացումների՝ անեծքն օժտված է հմայական գործությամբ և իրագործվելու հատկությամբ, ուստի դրա նկատմամբ զգուշավոր վերաբերմունքով պայմանավորված՝ կիրառվում է հույժ անհրաժեշտության կամ «դանակը ոսկորին հասնելու» դեպքում: Կարսի հեքիաթներից մեկում անեծքի գործության մասին հստակ գիտելիքներով առաջնորդվելով՝ գլխավոր հերոսին ընկերները զգուշացնում են զերծ մնալ անհարկի գործողություններից. «Ընկերները կրսեն.— Գործ չունիս, էղ պատվները շատ գեշ անեցք տալ գիտեն, քեզի կանիծի:

— Անիծում է, թող անիծի, էրոր անեցքը ընձի ի՞նչ կէնէ,— էսպես կրսէ ու նետը կը քցէ:

Քցելուն պես՝ կուժը կը ծակէ, ջուրը կը թափի: Պառավը էս բանը օր կը տեսնի, քաշլամիշ կէնէ անեցքը, կը ճանչնա թագավորի տղին, կրսէ.— Դու յավաշ, տես՝ ինչ օյին հանեմ գլուխդ, դու, իմ էս քասիբ հալով, զարկես կուծս ջարդե՞ս»:⁵ Անտեսված զգուշացումին հետևած անեծքը հետագա արկածալից ու դժվար հաղթահարելի գործողությունների նախապայմանն ու նախասկիզբն է:

Հեքիաթի ակզբնամասում սովորաբար անիծող կողմը դիմում է աստծո միջնորդությանը, որ իր բացասական ցանկությունն անմնացորդ իրականանա: Օրինակ՝ «Կրսէ.— Թագավոր, դու օր մե էրկու խնձոր չտվեցիր ընձի, աստուց կիսնդրեմ, օր բաղդ էնպես չորնա, դու էլ ընձի պես կարոտ մնաս մրգեղենից»:⁶

Անեծքը խաթարված արդարության վերականգնմանն է միտված, կամ. «Դարվիշ-սուլթանը կրսէ.— Չորան, էս Ալլահից դիլակ կէնեմ՝ քու օջիսար բուրդ [քուլլի] սատկի, դու գաս Ստամբոլ, Մուրադ աղին գտնիս»:⁷ Փաստորեն հեքիաթի սկզբնամասում կիրառված անեծքով են պայմանավորված հեքիաթի հետագա գործողությունները: Ուստի հմայական խոսքը վերածվում է գործողության, որի հետևանքով խաթարված բնական կարգի վերականգնումն էլ հանդիսանում է հեքիաթի բուն խնդիրը՝ իր շուրջ ծավալված հմայազերծման գործողություններով:

Հեքիաթի միջնամասում օգտագործվող անեծքներն արտահայտում են օգտագործողի ապրումները և նրա բացասական ցանկությունները՝ ուղղված այս կամ այն հերոսին, ինչպես, օրինակ՝ «Կրնիկը մե հատըմ մարթու գլխուն կը զարկէ.— Ա՛յ հողը քու գլխուն, դու ի՞նչ գիտես՝ ո՛ր զարթը ինձի ուրմիշ կուգա, օր դու

⁴ Յաշիֆիդան և Չնաշիսարիկ, № 3(3), Կարս, էջ 48:

⁵ Շահենշահ և Սալվի, № 31(31), Կարս, էջ 198:

⁶ Մլատ թագավորի հեքաթը կամ հազարան բիլբուլ, № 1(1), Կարս, էջ 34:

⁷ Սուլթան Մուրադի ու չորանի պատմությունը, № 77(77), Կարս, էջ 317:

ջրկե՛ս, ես էլ կախեմ իմ վրբեն»⁸, կամ «Կնիկն ասում ա.– *Սև գա վրեղ, գոթենաս, բը մինք ընչո՞վ ապրինք*»⁹ Բերված օրինակներից կարելի է եզրակացնել, որ անեծքները հիմնականում կանայք են օգտագործում: Հեքիաթների միջնամասում կան հեքիաթին բնորոշ կայուն անեծք-բանաձևեր, որոնք կիրառվում են հակոտնյա հերոսների կողմից, օրինակ՝ «Դեռ օր կը տեսնի տղին, կըսէ.– *Վա՛յ, քու սովրցնողի վիզը կտորեր*»¹⁰ Սա անակնկալի եկած թշնամու ուշացած անեծքն է: Նմանատիպ անեծքներն ուղղված են գլխավոր հերոսի օգնականներին ու խորհրդատուներին: Սովորաբար անեծքը տրվում է ինչ-որ բան կանխարգելելու նպատակով. ուշացած անեծքը չի կարող կանխարգելել, սակայն կարող է վնասել այն անձին, ով իր խորհուրդներով կասեցրել է ենթադրյալ իրադարձությունների ընթացքը:

Անեծքներին զուգահեռ՝ Կարսի հեքիաթներին բնորոշ են նաև սպառնալիք-զգուշացումները, որոնք գործողությունները ցանկալի հուն մտցնելու նպատակ են հետապնդում: Այսինքն՝ սպառնալիքի ու զգուշացման ազդեցության տակ այն ստացողը կամա, թե ակամա հետևում է նախանշված կարգին և իրագործում է իրեն թելադրված կամ պարտադրված գործողությունը: Օրինակ՝ «...մենք Երրորդության աստվածներն ենք՝ երկնքի, ցամաքի և ծովերի: Օր կերթաս, առաջ Լուսաբերին մեր աննից կըսես, թե՛ մեզեն որիս կուզէ իրան նշանած, թե օր չըսես, *Լուսաբերը հազար կտոր էղնի, մե կտորը քեզի չի հասնի*»¹¹ Սպառնալք-զգուշացումն իր մեջ պարունակում է նաև հերոսին փորձության ենթարկելու և նրա առաքինությունն ու մարդկային դրական հատկանիշները ստուգելու գաղտնի նպատակը, որից կախված է հերոսի հետագա ճակատագիրը:

Սպառնալիքն իր մեջ պարունակում է կոնկրետ կատարվելիք բացասական գործողության ցանկություն, որի ազդեցության տակ հակառակորդն աներկբայորեն պետք է հրաժարվի իր մտադրություններից, օրինակ՝ «– Շատ լավ,– կը կատողի Քուրդողլին,– *յավաշ, ես էքուց էդոր թախտը ծակեմ, գլոխը անցնեմ*»¹² Եթե անեծքներում խոսքի հմայական գործությունն իրագործողը գերբնական անձ է¹³, որի միջնորդությանը դիմում է անիծողը, ապա սպառնալիքի պարագայում որպես գործողություն կատարող հանդես է գալիս սպառնացող անձը: Որոշ դեպքերում հեքիաթներում կիրառվում է սպառնալիք-սաստում, որի դեպքում գործողություն կատարողն այն անձն է, ում այն ուղղված է, օրինակ՝ «Բերեն էդ մարդուն կապեն զը սընից, տերտերը կըսէ.– *Ձենըդ կըղռէ, անիծված, նարեկ բըղի կարթամ, օր խելքի գաս*»¹⁴

⁸ Լերի կնիկը, № 56(56), Կարս, էջ 290:

⁹ Թամբայի դամաթը, № 65(65), Կարս, էջ 300:

¹⁰ Յաշիֆիդան և Չնաշխարիկ, № 3(3), Կարս, էջ 49:

¹¹ Նալ թագավորի հեքիաթը, № 21(21), Կարս, էջ 146:

¹² Մեհրի և Շեհրի, № 46(46), Կարս, էջ 277:

¹³ Հարությունյան Ս., Անեծքի և օրինանքի ժանրը հայ բանահյուսության մեջ, ՀՄՄՀ ԳՄ հրատ., Եր., 1975, էջ 195:

¹⁴ Յա, ընչի՛, արդի մեջը ձուկ կէղնի՞, № 61(61), Կարս, էջ 295:

Հեքիաթի կառուցվածքի կարևորագույն բաղադրիչներից են օրհնանք-բարեմաղթությունները, որոնց հիման վրա կայուն բանաձևերի հմայական ներգործությունը նպաստում է հերոսի գործողությունների զարգացմանը: Դրանք հեքիաթներում հակակշռում են անեծքներին ու սպառնալիքներին՝ ստեղծելով հոգեբանական ներգործման դրական միջավայր: Դրական ցանկությունները հաջողության գրավական են և ուղեկցում են հերոսին խնդրի իրագործման ճանապարհին. «Պատավը կըսէ.– Որդի, ես էլ չիտեմ, գնա, *աստված գործդ աջողի*»:¹⁵

Կարսի հեքիաթներում առկա է օրհնանք-բարեմաղթությունների կիրառման ու գործառնության նշանակության երեք տիպ.

1) Հեքիաթապատման ընթացքում բանասացը ժամանակ առ ժամանակ օգտագործում է բարեմաղթանք, որն ուղղված է ունկնդիրներին և ապահովում է հեքիաթի դրական ներգործությունը լսարանի վրա, օրինակ՝ «Առավոտը լուս կբացվի, *բարի լուսը բացվի վրներդ*, թագավորը կը կանչէ ծառաներից մեկին...»¹⁶ կամ՝ « Իրկունը կը քնին, առավոտ կը լուսանա, *բարի լուսը բացվի վրներդ*, կելնին կը տեսնին՝ էնպես մե քոջք ու սարայս է կայնած, օր էդոր շուքը կընկնի թագավորի պալատների վրա»:¹⁷

Ակնհայտ է, որ բանասաց-լսարան կապը հեքիաթապատման ժամանակ ձևավորվում է հենց պատումի սկզբից, հաճախ չափածո սկսվածքով և պարբերաբար հեքիաթապատման ընթացքում թարմացվում է տարբեր դրական ներգործություն ունեցող բանաձևումներով, որոնք նպաստում են ունկնդիրների ուշադրությունը կենտրոնացնելուն:

2) Օրհնանք-բարեմաղթություններ, որ օգտագործվում են տարբեր հերոսների կողմից (թագավոր, ծնող, ծերունի, պառավ, հեքիաթային կենդանիներ) իրենց բարի կամեցողությունը, լավ բանի ցանկությունը որոշակի դրական արդյունքի ակնկալությամբ արտահայտելը: Օրինակ՝ «Թագավոր ջան, *քեզի ջանսաղութեն, աղջըկատ էլ թակ ու սրսակ գուզեն*»:¹⁸ Որով միաժամանակ առողջության և ամուսնության ապահովման գաղափարն է արծարծվում:

Այս խմբավորումը ներառում է օրհնանքների և մաղթանքների ապահովության ու պահպանության բոլոր տարատեսակները՝ իրենց բազմաբնույթ դրսևորումներով: Օրինակ՝ ճանապարհ գնացող հերոսին ուղղված մաղթանքով արտահայտվում է բարեհաջող ու անփորձանք ճանապարհի գաղափարը. «... դու շը տըղին կըսէ.– *Էրտաս բարով, բարով-խերով տեղ հասնիս*»:¹⁹ կամ՝ «Թագավորը բարի ճամպա կը մաղթէ տղին, կըսէ.– *Էրթաս բարով, ասված բարի ճամպա տա*»:²⁰ Մաղթանքին հավելված աստվածային հովանավորության գաղափարը ըստ ժողովրդական պատկերացումների՝ գործում է անխափան: Ուստի գերբնական ուժերին և աստծո պահպանությանը դիմելով՝ օրհնողը որոշակի դրական արդյունք է

¹⁵ Թագավորի պգտի տղեն, № 2(2), Կարս, էջ 40:

¹⁶ Յաշիֆիդան և Չնաշխարիկ, № 3(3), Կարս, էջ 45:

¹⁷ Փիր Ահմադի հեքիաթը, № 4(4), Կարս, էջ 52:

¹⁸ Օխտ ախպոր քուրը, № 10(10), Կարս, էջ 93:

¹⁹ Նույն տեղում, էջ 93:

²⁰ Թագավորի պգտի տղեն, № 2(2), Կարս, էջ 39:

ակնկալում, օրինակ՝ «...գրնացեք, *աստված ձեզի հետ էղնի*, դուք ձեզի համար ապրեք, ինչըն օր գուզեք»:²¹ կամ՝ «... կըսէ՝ Գնա, որդի, *աստված հետդ էղնի*»:²²

Հաճախ մաղթանքը կարող է ուղղված լինել օրհնություն ստացող հերոսի հանգուցյալ նախնիներին՝ ընդգծելով օրհնողի հարգանքն ու երկյուղածությունը նրանց նկատմամբ և մեռածի հոգու հովանավորության ակնկալիքը: Օրինակ՝ «...կըսէ՝ *Օղորմի հորդ, օր էկար ըսիր, քեզն շատ շնորակալ եմ, օր աղջկաս փրկեցիր եղ ցավաքարից*»:²³

3) Հեքիաթային օրհնանք-բանաձևերի այս խմբում ընդգրկված են այն օրհնանք-բարեմաղթությունները կամ, կարելի է ասել, այն շնորհները, որ տրվում են գլխավոր հերոսին կամ հերոսուհուն՝ ի նպաստ իրենց հետագա գործողությունների: Սովորաբար այսօրինակ օրհնանք-շնորհները տրվում են անժամկետ՝ աստծո, հրեշտակների, բախտ շնորհող ոչ երկրային ծագում ունեցող անհատների կողմից և ողջ կյանքում ուղղկցում են հերոսին: Օրինակ՝ «Էդ մարդիք (Երբորդության աստվածները - Է.Խ.) թագավորին կըսեն, օր... իրեք օրշնություն կա, կտանք քեզի, պետք կուզա: Ինչքան վռագ գործ ունենաս, ձիով կամ կառետով տեղ էրթալու էղնիս, *ձիուդ ոտ գետնին չառնէ, կառետիս կալոսը, դժի պես թոնելով էրթան*: Որտեղ կրակ էղնի, *ոտիդ տակ կրակը մարի*: Ճաշ էփելու կէղնիս, *դագանդ ինքն իրան ջուրը լցվի, օջախի մեջ առանց վառել փետերը վառվին*: Դե, բարի ճանքա, գնացեք»:²⁴

Հաճախ օրհնանք-շնորհները տրվում են նորածիններին կամ մանկահասակ երեխաներին՝ ապահովելով նրանց հետագա կյանքը ոչ միայն դրական լիցքերով, այլև սեփական խնդիրները լուծելու կարողությամբ, օրինակ՝ «Ըստեղ աղջկան կը օրշնէ, կըսէ՝ *Քելածդ վախտը ոտիդ տակի հողը օսկի դառնա, ծիծաղաս՝ չորս թարաֆդ վարդ-մանուշակ բուսնի, լվացվածդ տեղը յոնջա ու կորնկան բուսնի, էթէ լաս՝ քարէ կարկուտ գա*: Դե, գնա,՝ էս կըսէ ու ըխտիարը աներևույթ կէղնի»:²⁵

Այս օրհնանք-բարեմաղթությունները խարսխված են ժողովրդական հավատալիքների վրա, տրվում են որոշակի հանգամանքների դեպքում՝ պահպանելով ծիսաստվորութային մաղթանքների բնավորությունը, որը բնորոշ է ազգային ծիսակենցաղային սովորություններին: Իրենց բնույթով սրանք որոշակի կիրառական նշանակություն ունեն և հեքիաթի սյուժեի զարգացման ընթացքում հանգամանքների համապատասխան դասավորության պայմաններում ինքնաբերաբար և անմնացորդ իրագործվում են՝ օգնելով հերոսին հաղթահարելու տվյալ պահին հարուցված դժվարությունը կամ խնդիրը:

Քննությունը ցույց է տվել, որ Կարսի հեքիաթներում անեծք-սպառնալիքներն ու օրհնանք-բարեմաղթությունները կիրառվել են ըստ անհրաժեշտության և

²¹ Օխտ ախպոր քուրը, № 10(10), Կարս, էջ 94:

²² Թագավորի պզտի տղեն, № 2(2), Կարս, էջ 40:

²³ Շահենշահ և Մավլի, № 31(31), Կարս, էջ 198:

²⁴ Նալ թագավորի հեքիաթը, № 21(21), Կարս, էջ 147:

²⁵ Թաքավորի աղջկա հեքիաթը, № 26(26), Կարս, էջ 169:

պահանջի: Այս ժանրերը հեքիաթի համատեքստում իրականացրել են իրենց բնորոշ հատուկ գործառույթներ՝ ընդհուպ մինչև հեքիաթի գլխավոր խնդիր առաջադրելու և դրան նպաստելու դերակատարության կարողություն: Միննույն ժամանակ այս ժանրերը ծառայել են որպես գեղարվեստական արտահայտչամիջոցներ, ոճավորել և պատկերավոր են դարձրել հեքիաթապատրուր:

УПОТРЕБЛЕНИЕ УГРОЗ-ПРОКЛЯТИЙ И БЛАГОСЛОВЕНИЙ-ПОЖЕЛАНИЙ В СКАЗКАХ КАРСА

___ *Резюме* ___

___ *Э. Хемчян* ___

В народном фольклоре карсского региона существенное место занимают волшебные, бытовые и животные сказки, которые представляют местные варианты сюжетов и мотивов со своеобразным стилем и сказительской традицией, характерных армянскому сказочному наследию. Эти сказки, повествуясь диалектами, субдиалектами и говорами, бытующими в регионе, своей меткостью и многозначностью включили в себе богатые экземпляры лексики и выразительных средств.

Параллельно устойчивым сказочным формулам, карские сказители ввели в свои сказы паремиологические жанры - угроза, проклятие, благословение-пожелание, с помощью которых всё больше подчёркивали роль действий и героев сказки, вызывали положительные и отрицательные эмоции.

Исследование показало, что в сказках Карса паремиологические жанры применялись по необходимости. Эти жанры осуществляли не только особую функцию, но и служили в качестве художественных выразительных средств, стилизовали и делали сказки красочными.

Տեղեկություններ հեղինակի մասին

Խեմչյան Էսթեր Հայկի - ք.գ.թ., ՀՀ ԳԱԱ հնագիտության

և ազգագրության ինստիտուտ, E-mail: ekhemchyan@yandex.ru